«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2014 թվականի

«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսանողության և աշխատողների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքների ընթացքը Դիլիջանի «Տնտեսագետ» մարզաառողջարանում»** հարցը (զեկուցող՝ վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Կարապետյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. մարզաառողջարանում կատարվել են որոշակի վերանորոգման, վերականգնողական և բարեկարգման աշխատանքներ: Ձեռք են բերվել անհրաժեշտ տնտեսական գույք, խոհանոցային ու հիգիենայի պարագաներ, ընթացիկ նորոգման են ենթարկվել մի քանի սենյակներ, կարգի են բերվել խոհանոցային և լողասենյակների հատվածները: Մշակվել են մարզական և մշակութային, ինչպես նաև տուրիստական արշավներ կազմակերպելու ծրագրեր: Մարզաառողջարանը լիովին պատրաստ է հանգստացողներին ընդունելու համար: Ուղեգրերը վաճառվում են:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Կարապետյանին՝ մարզաառողջարանի գործունեության ամբողջ ընթացքում պատշաճ հսկողություն սահմանել իրականացվող աշխատանքների կատարման նկատմամբ:
2. Մարզաառողջարանի պետ Հ.Կյոկչյանին և կառավարիչ Ա.Ալիխանյանին՝ հետևել մարզաառողջարանի ներքին կարգուկանոնին, ապահովել բնականոն համակեցության պայմաններ, կազմակերպել մարզական և մշակութային միջոցառումներ ու տուրիստական արշավներ՝ մշակված պլան-գրաֆիկներին համապատասխան:
3. Համալսարանի գլխավոր հաշվապահ Ա.Մարգարյանին՝ հետևել ճամբարի ֆինանսական գործունեությանը և անհրաժեշտ օգնություն ցուցաբերել մարզաառողջարանի ղեկավարությանը:
4. Ուսանողական խորհրդի նախագահ Ս.Խաչատրյանին՝ ուսանողության շրջանում իրականացնել հայրենասիրական և դաստիարակչական աշխատանքներ, բացառել ռեժիմի խախտումները, սահմանել հերթապահություն հանգստի ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում:
5. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Կարապետյանին:

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**
23.06.2014 թ.